# ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Յունուարի 28 թիւ լրագրին մէջ Վեհափառ Կաթողիկոսի Բ․․․րդ տարեդարձի և Ս․ Աթոռոյս Ուսումնարանին հիմնարկութեան հանդիսին նկարագրութեան առթիւ՝ արևմտեան հիւսիսային անկեան հիման տակ դրուած պղնձեայ տախտակին վրայ արձանագրուածքին համար մի նամակագրի կողմէն հաղորդուած տեղեկութեան ակամայ սխալմունքը կամիմք ուղղել: Յիշեալ պղնձեայ տախտակին վրայ այսպէս արձանագրուած էր ։ «Ի Կայսրութեան Ռու«սաց Աղէքսանդրի Նիկողայոսեան կառոյց «զՍ․ Ուսումնարանս Ս․ Էջմիածնի՝ Կաթողի«կոս ամենայն Հայոց Գէորգ Դ․ Կոստանդ«նուպոլսեցի: 1869, մայիս, 21—ՌՅԺԸ․ մարերի․ Թ․»:

Այս առթիւ արժան կը համարիմք ծանուցանել զայս ևս, որ Վեհափառ Կաթողիկոսը Կոստանդնուպոլսեցի լինելով, հետևաբար Պրուսացի չէ, այլ Պրուսայու վիճակաւորն էր, ուստի ոմանք կը սխալին կարծելով Պրուսացի լինել ։

Ս․

---

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Քաջ գիտելով, որ քաղցր է Արարատիդ իւր զաւակաց ուսումնական յառաջադիմութեանը ուրախառիթ համբաւներ լսել ու հրատարակելը, ինձ քաղցր պարտականութիւն համարեցի Սաղեան գիւղի Ս․ Ստեփաննոսի վանուց Նորաբաց Դպրոցի մասին մասնաւոր տեղեկութիւն տալ դորան, յուսալով որ չը զլանար և Դա հրատարակել նոյնը իւր պատուական թերթերու միջոցաւ յուրախութիւն սիրելի Ազգայնոց:

Յայտնի է Վեհափառ Հայրապետի բարեպաշտ կամքը, ամենայն վիճակաց մէջ վանական Դպրոցներ հաստատելու և յառաջացնելու նրանք ուսումնական ասպարիզի մէջ, որքան որ նիւթական միջոցները ձեռնտու էին ։

Գերապատիւ Անդրէաս Արքեպիսկոպոսը Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ ընտրվելու օրէն՝ Նորին Վեհափառութեան ազգօգուտ կամքը կատարելը իւր սրբազան անհրաժեշտ պարտաւորութիւն համարելով, վերյիշեալ Վանուց մէջ (թէպէտ նա զրկուած է նիւթական կարողութիւնից) բացաւ մասնաւոր վանական Դպրոց Արժանապատիւ վանահայր Մկրտչեանց Սարգիս վարդապետի վերատեսչութեան ներքոյ․ ժողովեց հայ մանկունք՝ դաստիարակելու նորանց, ուսուցիչ կարգելով Փինաջեանց Աւետիս Սարկաւագը ։

Նորին Սրբազնութիւնը ներկայ ամսոյս մէջ վիճակիս Եկեղեցեաց այցելութեան ելանելու ժամանակ յիշեալ Դպրոցի ուսանողաց հարցաքննութիւն առնելով հետևեալ առարկայից, այն է՝ Հայոց և Ռուսաց ընթերցանութեան և փայելչագրութեան, Կրօնագիտութեան, Քերականութեան և Երգեցողութեան, գտաւ նրանց մէջ աշակերտները բաւական յաջող, որչափ որ կարճ ժամանակի մէջ կարելի էր յառաջացնել․ այս՝ Արժանապատիւ Տեսչի և բարեջան ուսուցչի անխոնջ ջանասիրութեան ապացոյց էր: Յանձնեց նորանց ուղեցոյց կառավարութեան նոյն Դպրոցի պատուական Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակուած վանական Դպրոցաց նորոգ կանոնադրութիւնը, յուսալով որ, եթէ ոչ առ այժմ, գոնէ